## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ

*Ս. Էջմիածին*

Վեհափառ Տեր,

Մեր ժողովրդին պատահած ողբերգական իրադարձությունների այս օրերին Ձեր ընտրությունը՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, հոգու ամրության, լույսի ու հավատի մի շող է մեր ժողովրդի համար, և աղոթում ենք Աստծուն, որ հաջողությամբ առաջնորդեք հավատացյալ Ձեր հոտը ճշմարիտի ու բարօրության ճանապարհով:

Ընդունեցեք, Վեհափառ Տեր, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ջերմ բարեմաղթանքը և մեր գոհունակությունն Աստծուն, որ Ս. Գրիգոր Լուսավորչի գահին բազմեցնելով Ձեզ, ստեղծեց ամուր երաշխիք՝ մեր ժողովրդին առաջնորդելու հույսի, հավատի ու սիրո ճանապարհով:

Խորին հարգանքով՝

**ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**